DOI: 10.54503/1829-4324.2023.1-16

1. ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ ԵՎ ՖԻՆԱՆՍՆԵՐ

ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԸՆԿԱԼՄԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Էլյանորա Նորայրի Մաթևոսյան
Աշոտ Խաչատուրի Մարկոսյան
Մարո Հայկազի Դեթլոֆֆ

Հոդվածը ստացվել է՝ 07.02.23, ուղարկվել է գրախոսման՝ 03.03.23, երաշխավորվել է տպագրության՝ 08.05.23

Ներածություն: Կոռուպցիան երկրների զարգացման և առաջընթացի լրջագույն խնդիրներից է, որի դրսևորման ձևերը այնքան բազմազան են, որքան մարդկային հասարակությունում ծագող հարաբերությունները, իսկ բացասական հետևանքները արտացոլվում են տնտեսական, քաղաքական, սոցիալական, մշակութային և մարդկային գործունեության մյուս ոլորտներում: Տնտեսական հարաբերությունների տեսանկյունից հաճախակի քննարկվում են այնպիսի հիմնահարցեր, որոնք վերաբերում են կոռուպցիայի հետևանքով տնտեսական կորուստներին, աղքատությանն ու եկամուտների անհավասարության խորացմանը, հանրային (պետական) հատվածի գործառութային անարդյունավետությանը, տնտեսական մրցակցության խեղաթյուրմանը: Սակայն հանրային քննարկման համատեքստում և կոռուպցիայի դեմ պայքարի միջոցառումների շարքում շատ ավելի հաճախ կենտրոնանում են քրեական կամ վարչական պատասխանատվության նորմերի սահմանման և կիրառման վրա, ինչպես նաև արդարադատության հասանելիության ու պատժի անխուսափելիության վրա: Արդյունքում, կոռուպցիոն երևույթներ ծնող պատճառները մնում են ստվերում, մինչդեռ «պայքարի» թիրախ են դառնում կոռուպցիայի հետևանքները:

Կոռուպցիայի և դրա դրսևորումների վերաբերյալ մինչ այժմ ՀՀ-ում վարվող քննարկումների հիմնական խնդիրը մնում է այնպիսի հանրային կարծիքի ձևավորումը, որը կոռուպցիան կդիտարկի որպես հասարակությանը սպառնացող վտանգ: Սակայն, որքան հեշտ է զբաղվել բարոյականության բարձր արժեքներ քարոզելով և կոռուպցիան արմատախիլ անելու հայտարարություններով ու ձգտումներով, այնքան շատ ավելի դժվար է ապրել և գործել հռչակված սկզբունքներին համապատասխան:

Արդիականությունը: Հայաստանի Հանրապետությունը, որպես անցումային տնտեսությամբ երկիր, ժառանգել է վարչական կոռուպցիայի բարձր մակարդակ, որին բնորոշ է հակակոռուպցիոն գործառույթներով օժտված պետական և հանրային ինստիտուտների բացակայությունը, կամ դրանց թույլ զարգացվածությունը: Այս հանգամանքը դրսևորվում է հանրային բարիքների բաշխման անհավասարության և անկատարության մեջ, պետական մարմիններում ներքին հսկողության գրեթե բացակայությամբ, ինչպես նաև հաշվետվողականության մեխանիզմների

բացակայությամբ կամ դրանց ձևական բնույթով: Հակակոռուպցիոն ռազմավարության մշակման և իրականացման համար կարևոր է առանձնացնել այն թիրախներն ու ոլորտները, որոնք խորքային բարեփոխման կարիք ունեն՝ հիմնվելով այդ հարաբերությունները կրողների՝ հասարակության ներկայացուցիչների կարծիքի վրա:

Նպատակը: Իրականացված հետազոտության նպատակն է ուսումնասիրել կոռուպցիայի հասկացության տեսամեթոդական հիմքերը, չափման մոտեցումները, դիտարկել կոռուպցիայի էությունը, ինչպես նաև հարցման եղանակով ուսումնասիրել Հայաստանի Հանրապետությունում կոռուպցիայի տարածման ոլորտները, այդ երևույթի ընկալման առանձնահատկություններն ու զգայունության աստիճանը:

Գրականության վերլուծություն: Կոռուպցիայի՝ որպես սոցիալական երևույթի հայեցակարգի և էության հարցի վերաբերյալ գոյություն ունեն բավականին լայն սահմանումներ, որոնք պայմանավորված են դիտարկվող երևույթի բարդությամբ և բազմազանությամբ: Բազմաթիվ գիտական ուսումնասիրություններ են նվիրված կոռուպցիայի խնդիրներին, ընդունվել են միջազգային պայմանագրեր՝ ուղղված հակակոռուպցիոն օրենսդրության մշակմանը, սակայն չի ձևակերպվել կոռուպցիայի համընդհանուր սահմանում:

Յուրաքանչյուր ոք կոռուպցիան սահմանում է իր ընկալմամբ՝ փիլիսոփայության, բարոյական և էթիկական գաղափարների պրիզմայով՝ տնտեսական մտքի դպրոցի տեսակետներին համապատասխան: Այս ընկալումների հիման վրա ձևավորվել է կոռուպցիոն խնդիրների վերաբերյալ գլոբալ իրավական կոնսենսուս՝ ամրագրված գործող միջազգային պայմանագրերով և երկրների ներքին օրենսդրությամբ:

«Կոռուպցիա» եզրույթի մեկնաբանությունը լատիներեն սկզբնաղբյուրի («corruptio») հիման վրա ընդհանուր պատկերացում է տալիս կոռուպցիայի էության մասին՝ իշխանությունում և հասարակությունում քայքայիչ գործընթացներ, որոնց պատճառը իշխանության կաշառվածությունն է[1]:

Ն.Մաքիավելին իրավամբ համարվում է նրանցից մեկը, ով առավել խորությամբ է ուսումնասիրել պետության գործունեության մեխանիզմները, այդ թվում՝ կոռուպցիոն հարաբերությունները: Նրա գնահատականներից շատերը պահպանել են իրենց արդիականությունը մինչ օրս: Բավական է հիշել կոռուպցիայի նրա պատկերավոր համեմատությունը սպառման հետ, որը սկզբում դժվար է ճանաչել, բայց հեշտ է բուժել, իսկ եթե հիվանդությունը անտեսվում է, ապա հեշտ է ճանաչել, սակայն շատ դժվար է բուժել[2]:

---

[1] Противодействие коррупции: учебное пособие / составители: А.М. Межведилов, Л.Т. Бакулина, И.О. Антонов, М.В. Талан, Ю.В. Виноградова, А.Д. Гильфанова. – Казань, изд.-во Казанского ун.-та, 2016, էջ 19.

[2] Machiavelli N. The Prince / Transl. from Italian K. A. Tananushko. M.: JSC “AST Publishing house”, 2002.

Կոռուպցիայի հիմնախնդիրները հետազոտողները պնդում են, որ կոռուպցիան բնորոշ է բոլոր երկրներին՝ անկախ քաղաքական կառուց-վածքից և տնտեսական զարգացման մակարդակից և ոչ մի երկիր չի կարող իրեն բացարձակապես պաշտպանված համարել կոռուպցիայից, տարբերությունները միայն դրա ծավալների մեջ են: Եվ ցանկացած պետության համար կոռուպցիան համարվում է ազգային անվտանգության լուրջ խնդիր[1]:

«Կոռուպցիա» հասկացության ժամանակակից սահմանումներից առավել համառոտներից մեկը պատկանում է Ջ.Սենտուրիային, ով բնորոշել է այն հետևյալ կերպ. սեփական շահի համար հասարակական իշխանության չարաշահում: Ընդ որում, անհասկանալի է մնում՝ տվյալ գործունեությունը վերաբերում է օրինական, թե անօրինական գործունեությանը, ստորադասվում է արդյոք հասարակական կարծիքը՝ խախտելով արդարության զգացողությունը, որքանով է շոշափելի դրա նյութական հետևանքը, օրինակ՝ խթանում է հասարակական բարեկեցությունը, թե վնասում է դրան, կամ ոչ նյութական կողմը՝ օրինակ վստահության կորուստը[2]:

Հետազոտողների հիմնական մասը կոռուպցիայի սահմանումը հանգեցնում են կաշառակերությանն ու պաշտոնական դիրքի չարաշահմանը: Մասնավորապես, 1979 թ. դեկտեմբերի 17-ին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից ընդունված 34/169 որոշման մեջ՝ իրավակարգը պահպանող պաշտոնատար անձի վարքի կանոնագրքում կոռուպցիան սահմանված է որպես «անհատական կամ խմբակային շահի համար պաշտոնական դիրքի չարաշահում, ինչպես նաև պետական ծառայողների կողմից պաշտոնական դիրքով պայմանավորված անօրինական ճանապարհով շահի ստացում»[3]:

Աշխարհի բոլոր երկրներում, և մասնավորապես անցումային տնտեսությամբ երկրներում կոռուպցիայի դրսևորումների, տարածման չափերի, ազդեցության ոլորտների և քաղաքականությունների ուսումնասիրությանը նվիրված եմ բազմաթիվ աշխատություններ, որոնք դիտարկում են կոռուպցիայի մակարդակի և տնտեսական աճի միջև փոխառնչությունները[4], կոռուպցիայի և եկամուտների բաշխման անհավասարության, աղքատության մակարդակի դրսևորումները[5], ինչպես նաև հանրային կյանքի մյուս ոլորտներում կոռուպցիայի առաջացման և այդ երևույթի դեմ պայքարի փորձառությունները:

---

[1] Луначо Виоланте. Конференция глав парламентов Центральной Европы. 1997 г.

[2] Մանուկյան Ա. Ա., Արտասահմանյան երկրների հակակոռուպցիոն քաղաքականության համեմատական վերլուծություն, ուսումնամեթոդական ձեռնարկ, Եր., ԵՊՀ հրատ., 2015, էջ 9.

[3] ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիա, http://iravaban.net/wp-content/uploads/2014/03/UNCAC.pdf

[4] James A.Anderson, Cheryl W. Gray. Anticorruption In Transition 3: Who Is Succeeding ... And Why? The World Bank, 2006, https://www.researchgate.net/publication/281079696_Anticorruption_In_Transition_3_Who_Is_Succeeding_And_Why

[5] Sanjeev Gupta. Does Corruption Affect Income Inequality and Poverty?, IMF eLibrary, https://www.elibrary.imf.org/view/journals/001/1998/076/article-A001-en.xml

Հետազոտության առարկա են դառնում նաև տնտեսագիտության տեսության մեջ կոռուպցիայի ուսումնասիրության մեթոդները, որտեղ, մասնավորապես, հարցադրումներ են արվում թե արդյո՞ք ինստիտուցիոնալ տնտեսագիտությունը կարող է հաղթահարել կոռուպցիայի շուրջ առաջացող խնդիրները: Հեղինակի եզրահանգումներից է, որ է ավելի լրջորեն պետք է դիտարկել այն միջավայրը, որտեղ տեղի է ունենում կոռուպցիան, իսկ տնտեսագիտության տեսությունը չպետք է հիմնվի միայն կոռուպցիայի վերաբերյալ ավանդական մոտեցումների վրա, այլ պետք է առնվազն կոռուպցիայի վերլուծության իր մեթոդներին ավելացնել ինստիտուցիոնալ տնտեսագիտությունը և վերաբաշխման համակարգի տեսության մեթոդները[1]:

Գիտական և մասնագիտական քննարկումների ընթացքում առավել լայն կիրառություն են ստացել կոռուպցիայի երկու սահմանումներ: Ըստ Համաշխարհային բանկի. «Կոռուպցիան հանրային իշխանության չարաշահումն է անձնական շահի համար»[2], իսկ «Թրանսփարենսի Ինթերնեշնլ» միջազգային հակակոռուպցիոն կազմակերպության սահմանման համաձայն՝ կոռուպցիան ի պաշտոնե տրված իշխանական լիազորությունների չարաշահումն է՝ անձնական օգուտ ստանալու նպատակով[3]:

Ինչպես տեսնում ենք, ո'չ կոռուպցիոն դրսևորումները, ո'չ էլ այդ հասկացության սահմանումները սպառիչ անվանել չի կարելի: Ժամանակակից հասարակության կյանքի հասարակական-քաղաքական, տնտեսական, տեխնոլոգիական, գաղափարական, բարոյահոգեբանական անընդհատ փոփոխվող պայմաններում անխուսափելիորեն հայտնվում են կոռուպցիայի նոր տեսակներ, ինչը պահանջում է կոռուպցիոն դրսևորումների վիճակի և էվոլյուցիայի մշտական մոնիտորինգի անհրաժեշտությունը:

Մեթոդաբանություն: Կոռուպցիոն երևույթների տարածվածության, կոռուպցիայի չափման, ընկալման ու գնահատման խնդիրը ներկայումս տարբեր միջազգային կազմակերպությունների գործառույթներից է: Կոռուպցիայի չափման ամենատարածված ցուցիչներից է «Թրանսփարենսի Ինթերնեշնլ» միջազգային կազմակերպության կողմից 1995 թվականից ի վեր հրապարակվող «Կոռուպցիայի ընկալման ինդեքս» (CPI - Corruption Perception Index) ամենամյա զեկույցը, որը պետական հատվածում առկա կոռուպցիայի գնահատման հեղինակավոր հետազոտական աշխատանքների թվին է դասվում: Ինդեքսը թույլ է տալիս պատկերացնել ինչպես աշխարհում, այնպես էլ առանձին երկրներում կոռուպցիայի հարաբերական աստիճանը՝ իրականացնելով միջժամանակային և միջերկրային համեմատականներ ու վերլուծություններ: Դրա հաշվարկման հիմքում դրված են

---

[1] Wawrosz, Petr. 2022. How Corruption Is and Should Be Investigated by Economic Theory. Economies 10: 326. https://doi.org/ 10.3390/economies10120326

[2] http://www.worldbank.org/publicsector/anticorrupt/corruptn/cor02.htm

[3] Ի՞նչ է կոռուպցիան, «Թրանսփարենսի Ինթերնեշնլ» հակակոռուպցիոն կենտրոն, https://www.transparency.am/hy/what-is-corruption

բազմաթիվ աղբյուրներից ստացված տվյալները, որոնք թույլ են տալիս ապահովել ստացված արդյունքների հավաստիությունը:

Ինչ վերաբերում է հանրության շրջանում կոռուպցիայի ընկալմանը, ապա այս երևույթի չափման համար լայնորեն կիրառվում է հարցումների մեթոդաբանությունը: Այսպես, օրինակ, ԱՄՆ Միջազգային հանրապետական ինստիտուտի (ՄՀԻ) կողմից 2022թ. հունվարին հրապարակված հեռախոսային հարցման տվյալներով քաղաքացիների 46%-ը գտնում է, որ երկիրը շարժվում է սխալ ուղղությամբ և միայն 34%-ի կարծիքով է, որ երկիրը ընթանում է ճիշտ ուղղությամբ: Մյուս կողմից, հարցվածների 61%-ի կարծիքով երկիրը կառավարվում է՝ ելնելով որոշ խմբերի շահերից և միայն 31%-ն է կարծում, որ այն կառավարվում է՝ ելնելով մեծամասնության շահերից[1]:

Սույն հետազոտության շրջանակներում մեր կողմից կազմակերպվել է հարցում՝ պարզելու համար ՀՀ բնակչության ընկալումը երկրում կոռուպցիայի դրսևորումների վերաբերյալ, ինչպես նաև գնահատելու համար առաջադրված հարցերի զգայունությունը: Հարցվողների առաջարկվել է նախ պատասխանել կոռուպցիայի մասին հարցաթերթում ներկայացված մի շարք (մեր կողմից առանձնացված) հարցերին և գնահատել դրանց զգայունությունը 0-ից (ոչ զգայուն) մինչև 10-ը (շատ զգայուն) սանդղակի միջոցով: Ընդ որում, զգայունությունը երկու կողմ է պարունակում, որոնք կարող են միասին կամ միմյանցից առանձին հանդես գալ: Մի կողմից զգայունությունը նշանակում է, որ հարցերը կարող են պնդումների տեսքով ընկալվել, այսինքն՝ շոշափել մի թեմա, որի մասին հարցվողը ոչ մի տեղեկատվություն տալ չի ցանկանում: Այս առումով զգայուն հարցերը կարող են հանրության համար անընդունելի երևույթների մասին կամ անձնական տեղեկատվություն կորզել: Մյուս կողմից, հարցերի զգայունության գնահատումը կապված է դրանց վտանգավորության հետ, և բացասական հետևանքների առաջացման վախի պատճառով հարցվողները դրանց չեն պատասխանում:

Հարցումն անցկացվել է անանուն, իրականացվել է առցանց հարցման միջոցով՝ նախապես ստեղծված հարթակի կիրառմամբ[2]: Հարցմանը մասնակցելու հրավիրվել են գիտակրթական համակարգի, գործարար աշխարհի, ինչպես նաև հանրային հատվածի ներկայացուցիչներ:

Պարտադիր կերպով հավաքագրվել են հարցվողների կրթական մակարդակի, եկամուտների և ծախսերի, տարիքի և սեռի, զբաղվածության վերաբերյալ տվյալները: Հարցման արդյունքները չեն կշռվել:

---

[1] Հայտարարություն կոռուպցիայի դեմ պայքարի միջազգային օրվա առթիվ (09.12.2022թ.), Տե՛ս https://www.transparency.am/hy/media/statements/article/4782 հղմամբ (դիտելու ամսաթիվը՝ 12.05.2023թ.):

[2] Տե՛ս https://docs.google.com/forms/d/1AhBJJJon0WQeXbWZqxon_6VID9Yhu2IhTVOX-H2r6V0/closedform?pli=1 հղմամբ:

Մասնակիցների ընտրությունն իրականացվել է նպատակաուղղված ընտրանքի և ընտրանքի ձևավորման «ձնակույտի» մեթոդների միջոցով: Հարցմանը մասնակցել է 70 քաղաքացի, իսկ հարցման գործընթացը տևել է 25 օր:

Վերլուծություն: Աղյուսակ 1-ում ներկայացված է հարցմանը մասնակցած անձանց բաշխվածությունը՝ ըստ տարբեր խմբավորումների:

Աղյուսակ 1

Հարցման մասնակիցների բաշխումը՝ խմբավորված ըստ տարբեր չափանիշների

Հարցվածների բաշխվածությունը ըստ չափորոշիչների	Հարցվածների թիվը	Տեսակարար կշիռը, %
Ընդամենը	**70**	**100**
Ըստ եկամուտների մակարդակի		
Մինչև 100000	14	20
100000-200000	29	41
200000 և ավելի	27	39
Ըստ կրթական մակարդակի		
Բակալավր	9	13
Մագիստրոս	25	36
Գիտությունների թեկնածուի և ավելի բարձր գիտական աստիճան ունեցող	27	38
Ինստիտուտ / վարժարան /միջին մասնագիտական կրթություն ունեցող	9	13
Ըստ զբաղվածության		
Աշխատող	51	73
Գործազուրկ	1	1
Թոշակառու	3	4
Ձեռնարկատեր / ինքնազբաղված	6	9
Ուսանող	8	12
Տնային տնտեսությունում զբաղված	1	1
Ըստ սեռի		
Արական	21	30
Իգական	49	70

Հարցման արդյունքներով ՀՀ-ում կոռուպցիայի մակարդակի գնահատման համար առավել վստահելի աղբյուրներ են համարվում ընկերներից և ծանոթներից ստացված տեղեկությունները, ինչպես նաև անձնական փորձը: Հատկանշական է, որ լրատվական միջոցներից ստացված տեղեկատվությունը դիտարկվում է որպես ոչ հավաստի: Հետևյալ հարցի պատասխանը՝ «Եթե դուք գնահատեիք, թե Հայաստանում կոռուպցիան ինչ հաճախականությամբ է հանդես գալիս, ապա ի՞նչ աղբյուրի վրա հիմնվելով այն կգնահատեիք» ներկայացված է գծապատկեր 1-ում:

Ըստ վերը նշված մեթոդաբանության գծապատկեր 1-ում ներկայացված հարցի զգայունությունը միջինից բարձր է և կազմում է 5.5:



Գծապատկեր 1. **Կոռուպցիայի վերաբերյալ տեղեկատվության ստանալու աղբյուրները**

Հասկանալու համար կրթական համակարգում կոռուպցիայի վերաբերյալ պատկերացումը, հարցվածները գնահատել են երկու տիպի գործողություններում կոռուպցիայի առկայությունը: Այդ գործողություններն են՝ երբ ուսանողը կամ ուսանողի ծնողը քննության օրը դասախոսին նվեր է տալիս, և հանրային պաշտոնյան իր բարեկամի թեկնածությունն է խորհուրդ տալիս նախարարությունում պաշտոնի համար:

Ըստ հետազոտության արդյունքների, այս երկու գործողություններն էլ հանդիսանում են կոռուպցիա: Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ հարցվածներից յուրաքանչյուր երրորդը հանրային պաշտոնյայի կողմից իր բարեկամին պաշտոնում խորհուրդ տալը չի համարում, որ իրենից ներկայացնում է կոռուպցիա, մինչդեռ դասախոսին նվերը կոռուպցիա համարում են հարվածների գերակշիռ մասը՝ գրեթե 4/5-ը (գծապատկեր 2): Տվյալ հարցի զգայությունը նույնպես բարձր է և կազմում է 6.2:



Գծապատկեր 2. **«Ստորև ներկայացված է մի քանի գործողության տեսակ: Այս գործողություններից յուրաքանչյուրի համար, խնդրում ենք ասել, արդյո՞ք Ձեր պատկերացմամբ դրանք իրենցից կոռուպցիա են ներկայացնում, թե ոչ» հարցի պատասխանների բաշխվածությունը**

Կոռուպցիայի հիմնական շարժառիթը ըստ հարցվածների՝ գործերի ընթացքը արագացնելն է, ընդ որում այս պատասխանը առավել տարածված է բարձր եկամուտների ունեցողների շրջանում, մինչդեռ ցածր եկամուտներ ունեցողների շրջանում առավել տարածված է այն կարծիքը, որ կոռուպցիայի դիմում են այլընտրանքի բացակայության պատճառով (գծապատկեր 3)։



Գծապատկեր 3. **Կոռուպցիայի շարժառիթները ըստ տնային տնտեսության միջին եկամտի մակարդակի: Հարցը՝ «Ստորև ներկայացված են կոռուպցիայի մի քանի շարժառիթ: Ձեր կարծիքով նշվածներից որո՞նք են կոռուպցիոն գործարքների հիմնական շարժառիթները»**

Ուղիղ տրված հարցին թե արդյոք անձը կընդունի իրեն առաջարկվող կաշառքը թե ոչ, հարցվածների գերակշիռ մեծամասնությունը պատասխանել է, որ կմերժի և միայն 10-ից մեկն է նշել, որ չի հրաժարվի նման առաջարկից: Հատկանշական է, որ անկախ սեռից, տարիքից և աշխատանքի ոլորտից (տնտեսության ոլորտներ/ պետական ծառայող) այս ցուցանիշը գրեթե անփոփոխ է։

Կարևոր է բացահայտել նաև նվեր (կաշառք) վերցնելու կամ չվերցնելու շարժառիթը: Չվերցնելու հիմնական շարժառիթներն են ազնիվ լինելը և որոշակի առումով վախը պատժվելուց: Հատկանշական է, որ պատժից վախը առավել բարձր է հատկապես բարձր տարիքային խմբերի դեպքում, մինչդեռ երիտասարդներ շրջանում ազնվությունը առավել են կարևորում (գծապատկեր 4):



Գծապատկեր 4. **Կաշառք չվերցնելու շարժառիթները՝ տարբեր տարիքային խմբերի համար**

Նկատենք նաև, որ ըստ հարցման արդյունքների, վերցնելու պարագայում հիմնական շարժառիթը եկամուտների պակասը և կաշառքի համակարգային բնույթն է: Հատկանշական է նաև, որ հարցվածների շատ ավելի մեծ կշիռը՝ յուրաքանչյուր չորրորդը, կտա կաշառք, եթե ստիպված լինի:

Ընդ որում, տղամարդկանց շրջանում, այս կշիռը ավելի բարձր է մոտ երկու անգամ, քան կանանց շրջանում, տղամարդկանց 33%-ն է պատրաստ կաշառել անհրաժեշտության դեպքում, իսկ կանանց 18%-ը:

Հասկանալու համար կոռուպցիայի մակարդակը տարբեր ոլորտներում նաև փորձել ենք պարզել տարբեր կառույցների հետ հասարակության շփման մակարդակը: Այսպես, վերջին 12 ամիսների ընթացքում ստորև ներկայացված կառույցներից քաղաքացիները առավել հաճախ առնչվել են առողջապահության և կրթության ոլորտների կազմակերպությունների հետ: Համեմատաբար ցածր է պետական եկամուտների կոմիտեի երկու կառույցների՝ հարկային (40%) և մաքսային մարմինների (55%) հետ շփումը և տեղական ինքնակառավարման մարմինների հետ կապ ունեցող անձանց կշիռը (գծապատկեր 5):



Գծապատկեր 5. **«Նախորդ 12 ամիսների ընթացքում արդյո՞ք Դուք կամ Ձեր ընտանիքի անդամները առնչվել են ներքոնշյալ ոլորտների կառույց(ներ)ի հետ» հարցի պատասխանները**

Նշված կառույցների հետ կապ ունեցող անձինք պնդում են, որ իրենք այդ կառույցների աշխատակիցներին կաշառք չեն տվել: Հարցվածների միայն 2-ական տոկոսը նշում են, որ կաշառք են տվել առողջապահության և կրթության ոլորտի ներկայացուցիչներին, իսկ գումարը տատանվում է 25-ից 100 հազ. դրամի սահմաններում:

Ըստ էության, տարօրինակ չէ, որ ուղղակի հարցադրմամբ կոռուպցիայի դեպքերի մասին քչերն են խոստովանում: Դրան հակառակ, կոռուպցիայի իրական մակարդակը կարելի է պարզել անուղղակի հարցադրման միջոցով, ըստ որի, հարցվածների կեսից ավելին վերջին 12 ամիսների ընթացքում լսել է առնվազն մեկ դեպք բարեկամներից, ընկերներից, ծանոթներից կամ հարևաններից, որ կաշառք են վճարել որևէ հանրային ծառայություն ստանալու համար (գծապատկեր 6):

Ընդ որում, ցածր եկամուտների ունեցողների շրջանում այս ցուցանիշը ավելի բարձր է և հասնում է գրեթե 72%-ի:

Նկատենք նաև, որ հարցվածները Հայաստանում պետական հատվածի/ծառայության պաշտոնյաներին զանգելիս/առնչվելիս երբեմն ծառայողն ուղղակիորեն չի պահանջել, բայց ցույց է տվել կամ հասկացրել է, որ նա ակնկալում է կանխիկ գումար / նվեր կամ անձն օգտագործել է իր անձնական կոնտակտները, որպեսզի նախընտրելի ձևով սպասարկվի, ինչը փաստորեն առավել տարածված է քան ուղղակի գումարով կաշառումը (գծապատկեր 7):



Գծապատկեր 6. **Կոռուպցիայի դեպքերի մասին վերջին 12 ամիսներին լսածների կշիռը ըստ տնային տնտեսության միջին եկամտի մակարդակի: «Նախորդ 12 ամիսների ընթացքում լսե՞լ եք որևէ մեկից, ներառյալ Ձեր բարեկամներից, ընկերներից, ծանոթներից կամ հարևաններից, որ կաշառք են վճարել որևէ հանրային ծառայություն ստանալու համար» հարցի պատասխանները**



Գծապատկեր 7. **«Հայաստանում պետական հատվածի/ծառայության պաշտոնյաներին զանգելիս/առնչվելիս որքա՞ն հաճախ է պատահել հետևյալը» հարցի պատասխանները**

Ըստ հարցման արդյունքների, կառավարության կողմից կոռուպցիայի դեմ համակարգված պայքարի ցանկության մասին կարծիքները բաժանվում են երկու հավասար մասի: Հարցվածները մի մասը՝ 51.4%-ը պնդում է, որ Հայաստանի այժմյան կառավարությունն իրական ցանկություն և կամք ունի կոռուպցիան հաղթահարելու համար, իսկ 48.6% հակված է կարծելու, որ դա այդպես չէ (գծապատկեր 8):



Գծապատկեր 8. **«Գնահատեք հետևյալ դրույթը՝ Հայաստանի կառավարությունն իրական ցանկություն և կամք ունի կոռուպցիան հաղթահարելու համար» հարցի պատասխանները**

Հարցվածները համապատասխան մարմիններին կոռուպցիայի մասին չհայտնելու համար առավել կարևոր հանգամանք են համարում այն, որ ոչ մի գործողություն չի կատարվի նույնիսկ, եթե կոռուպցիայի մասին մատնանշվի (այդպես են համարում հարցվածների 56%-ը), ինչպես նաև՝ դրանով չեն հասնի ցանկալի հետևանքներին: Միևնույն ժամանակ կարևորվում է նաև կոռուպցիայի դեպքերի մասին հայտնողների հանդեպ հասարակության բացասական վերաբերմունքը, այդպես է կարծում հարցվածների 41%-ը:

Հարցման արդյունքները ցույց տվեցին նաև, որ կոռուպցիոն երևույթների մասին հասարակությունը հեշտությամբ չի համաձայնվում խոսել, մեկնաբանել և բացահայտել: Շատ հաճախ հանդիպել ենք այնպիսի դժվարությունների, երբ հարցվողները ընդհանրապես չեն ցանկանում պատասխանել ներկայացված հարցադրումներին՝ չբացահայտելով պատճառները: Այնուամենայնիվ, հարցման արդյունքները ցույց են տալիս, որ մեր կողմից բարձրացված բոլոր հարցերը հանրության համար ունեն զգայունության բարձր աստիճան:

Գիտական նորույթ: Մեր կողմից իրականացված հարցման արդյունքները կարող են ծառայել որպես այլընտրանք միջազգային կազմակերպությունների կողմից հաշվարկվող կոռուպցիայի ընկալման համաթվերի, որը, բացի կոռուպցիայի դրսևորման հիմնական ոլորտների բացահայտումից, թույլ է տալիս նաև բացահայտել հանրության համար խնդիրների զգայունության աստիճանը:

Եզրակացություն: Կոռուպցիոն դրսևորումների դասակարգումը երբևէ սպառիչ չի համարվել: Հասարակության կյանքի հասարակական-քաղաքական, տնտեսական, հոգևոր, գաղափարական, բարոյահոգեբանական անընդհատ փոփոխվող պայմաններում ի հայտ են գալիս կոռուպցիայի նոր տեսակներ: Այս հանգամանքը պահանջում է կոռուպցիոն դրսևորումների վիճակի և փոփոխությունների մշտա-

կան մոնիտորինգ, ինչը թույլ կտա ժամանակին ճշգրտել հակակոռուպցիոն գործողությունները՝ նոր ի հայտ եկած մարտահրավերներին համապատասխան:

ՀՀ-ում կոռուպցիոն երևույթների ընկալման և զգայունության գնահատման նպատակով 2022 թ.-ի հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին իրականացված հարցման արդյունքները վկայում են, որ կոռուպցիոն երևույթների մասին հանրային կարծիքը դժվար է ամփոփել: Շատ հաճախ քաղաքացիները, տնտեսավարող սուբյեկտների ներկայացուցիչները հրաժարվում են համագործակցել անգամ տեղեկատվության հավաքագրման հարցում: Նույնը վերաբերում է նաև կոռուպցիայի դրսևորումների մեկնաբանմանը և բացահայտմանը տարբեր ոլորտներում:

Հետազոտական արդյունքները վկայում են նաև այն մասին, որ ՀՀ քաղաքացիների համար դեռևս շատ են զսպող հանգամանքները, որոնց ուժով նրանք չեն ցանկանում բացահայտել սեփական տեսակետը, փորձը և ընկալումները այդ երևույթի վերաբերյալ: Այսպես, մեր կողմից բաշխված շուրջ 3000 հարցվող նախատեսող հարցաթերթին պատասխանեցին միայն 70 մարդ: Այս պարագայում էլ հարցման արդյունքները վկայում են այն մասին, որ կոռուպցիոն դրսևորումների տեսանկյունից ամենատարածված ոլորտները մնում են առողջապահության (78%) և կրթության (77%) ոլորտները: Մինչդեռ պետական եկամուտների, մաքսային և տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների ոլորտներում կոռուպցիոն դրսևորումները նվազել են կազմելով համապատասխանաբար՝ 60%, 45% և 56%: Սա ևս մեկ անգամ հաստատում է այն միտքը, որ կոռուպցիայի դեմ պայքարը ընկալվում է որպես իշխանությունների մենաշնորհ (վերջին տարիներին ամենաշատ ուշադրությունը դարձվում է հենց նշված մարմիններում կոռուպցիայի դեմ պայքարին), մինչդեռ քաղաքացիները իրենց դերակատարումը չեն տեսնում այնպիսի ոլորտներում կոռուպցիայի վերացման գործում, ինչպիսիք են՝ առողջապահությունը, կրթությունը (ներառյալ կրթության բոլոր մակարդակները) և տնտեսության մյուս ոլորտները, որոնք գործում են շուկայական հարաբերությունների շրջանակներում: Այնուամենայնիվ, հարցման արդյունքները ցույց են տալիս, որ հարցաթերթում բարձրացված բոլոր հարցերը ունեն զգայունության բարձր աստիճան՝ 5,5 և ավելի 10 բալանոց սանդղակում:

Օգտագործված գրականության ցանկ

1. Ի՞նչ է կոռուպցիան, «Թրանսպարենսի Ինթերնեշնլ» հակակոռուպցիոն կենտրոն, https://www.transparency.am/hy/what-is-corruption
2. Հայտարարություն կոռուպցիայի դեմ պայքարի միջազգային օրվա առթիվ (09.12.2022թ.), հղումը՝ https://www.transparency.am/hy/media/statements/article/4782 , դիտելու ամսաթիվը՝ 12.05.2023թ.:
3. ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիա, http://iravaban.net/wp-content/uploads/2014/03/UNCAC.pdf

4. Մանուկյան Ա. Ա., Արտասահմանյան երկրների հակակոռուպցիոն քաղաքականության համեմատական վերլուծություն, ուսումնամեթոդական ձեռնարկ, Եր., ԵՊՀ հրատ., 2015, 116 էջ:
5. Луначо Виоланте. Конференция глав парламентов Центральной Европы. 1997 г.
6. Противодействие коррупции: учебное пособие / составители: А.М. Межведилов, Л.Т. Бакулина, И.О. Антонов, М.В. Талан, Ю.В. Виноградова, А.Д. Гильфанова. – Казань, изд.-во Казанского ун.-та, 2016, 192 էջ:
7. James A.Anderson, Cheryl W. Gray. Anticorruption In Transition 3: Who Is Succeeding ... And Why? The World Bank, 2006, https://www.researchgate.net/publication/281079696_Anticorruption_In_Transition_3_Who_Is_Succeeding_And_Why
8. Machiavelli N. The Prince / Transl. from Italian K. A. Tananushko. M.: JSC "AST Publishing house", 2002.
9. Sanjeev Gupta. Does Corruption Affect Income Inequality and Poverty?, IMF eLibrary, https://www.elibrary.imf.org/view/journals/001/1998/076/article-A001-en.xml
10. Wawrosz, Petr. 2022. How Corruption Is and Should Be Investigated by Economic Theory. Economies 10: 326. https://doi.org/ 10.3390/economies10120326
11. http://www.worldbank.org/publicsector/anticorrupt/corruptn/cor02.htm 19

References

1. I՞nch e' kor'owpcian, «T'ransp'arensi Int'erneshnl» hakakor'owpcion kentron, https://www.transparency.am/hy/what-is-corruption
2. Haytararowt'yown kor'owpciayi dem payqari mijazgayin o'rva ar't'iv (09.12.2022t'.), hghowmy'՝ https://www.transparency.am/hy/media/statements/article/4782 , ditelow amsat'ivy'՝ 12.05.2023t'.:
3. MAK-i Kor'owpciayi dem konvencia, http://iravaban.net/wp-content/uploads/2014/03/UNCAC.pdf
4. Manowkyan A. A., Artasahmanyan erkrneri hakakor'owpcion qaghaqakanowt'yan hamematakan verlowc'owt'yown, owsowmnamet'odakan d'er'nark, Er., EPH hrat., 2015, 116 e'j:
5. Lunacho Violante. Konferencija glav parlamentov Central'noj Evropy. 1997 g
6. Protivodejstvie korrupcii: uchebnoe posobie / sostaviteli: A.M. Mezhvedilov, L.T. Bakulina, I.O. Antonov, M.V. Talan, Ju.V. Vinogradova, A.D. Gil'fanova. – Kazan', izd.-vo Kazanskogo un.-ta, 2016, 192 էջ:
7. James A.Anderson, Cheryl W. Gray. Anticorruption In Transition 3: Who Is Succeeding ... And Why? The World Bank, 2006, https://www.researchgate.net/publication/281079696_Anticorruption_In_Transition_3_Who_Is_Succeeding_And_Why
8. Machiavelli N. The Prince / Transl. from Italian K. A. Tananushko. M.: JSC "AST Publishing house", 2002.

9. Sanjeev Gupta. Does Corruption Affect Income Inequality and Poverty?, IMF eLibrary, https://www.elibrary.imf.org/view/journals/001/1998/076/article-A001-en.xml
10. Wawrosz, Petr. 2022. How Corruption Is and Should Be Investigated by Economic Theory. Economies 10: 326. https://doi.org/ 10.3390/economies10120326
11. http://www.worldbank.org/publicsector/anticorrupt/corruptn/cor02.htm 19

ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԸՆԿԱԼՄԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Էլյանորա Նորայրի Մաթևոսյան
Աշոտ Խաչատուրի Մարկոսյան
Մարո Հայկազի Դեթլոֆֆ

Համառոտագիր: Հայաստանի Հանրապետությունը, որպես անցումային տնտեսությամբ երկիր, ժառանգել է վարչական կոռուպցիայի բարձր մակարդակ, որին բնորոշ է հակակոռուպցիոն գործառույթներով օժտված պետական և հանրային ինստիտուտների բացակայությունը, կամ դրանց թույլ զարգացվածությունը: Հակակոռուպցիոն ռազմավարության մշակման և իրականացման համար կարևոր է առանձնացնել այն թիրախներն ու ոլորտները որոնք խորքային բարեփոխման կարիք ունեն՝ հիմնվելով այդ հարաբերությունները կրողների՝ հասարակության ներկայացուցիչների կարծիքի վրա: Նշվածով էլ պայմանավորված է ուսումնասիրության արդիականությունը:

Հետազոտության նպատակն է ներկայացնել կոռուպցիայի հասկացության տեսամեթոդական հիմքերը, չափման մոտեցումները, ինչպես նաև հարցման եղանակով ուսումնասիրել Հայաստանի Հանրապետությունում կոռուպցիայի տարածման ոլորտները, այդ երևույթի ընկալման առանձնահատկություններն ու զգայունության աստիճանը: **Հետազոտության խնդիրն է**՝ ՀՀ ժամանակակից հանրության շրջանում բացահայտված ամենակոռումպացված ոլորտների և կոռուպցիայի զգայունության չափման հիման վրա առանձնացնել հակակոռուպցիոն պայքարի առաջնային ոլորտները:

Հետազոտության ընթացքում կիրառվել են վերլուծական, հարցումների իրականացման, որակական և քանակական չափման մեթոդներ: Հարցման մասնակիցների ընտրությունն իրականացվել է նպատակաուղղված ընտրանքի և ընտրանքի ձևավորման «ձնակույտի» մեթոդների միջոցով:

Ուսումնասիրության արդյունքները վկայում են, որ կոռուպցիոն դրսևորումների դասակարգումը երբևէ սպառիչ չի կարող համարվել: Հասարակության կյանքի անընդհատ փոփոխվող պայմաններում ի հայտ են գալիս կոռուպցիայի նոր տեսակներ:

ՀՀ-ում կոռուպցիոն երևույթների ընկալման և զգայունության գնահատման նպատակով իրականացված հարցման արդյունքները վկայում են, որ կոռուպցիոն դրսևորումների տեսանկյունից ՀՀ-ում ամենատարածված ոլորտները մնում են առողջապահությունը (հարցվածների 78%-ի կարծիքով) և կրթությունը (77%): Մինչդեռ, կոռուպցիայի դեմ պայքարը հանրության կողմից ընկալվում է որպես իշխանությունների մենաշնորհ, իսկ քաղաքացիները իրենց դերակատարումը չեն տեսնում այնպիսի ոլորտներում կոռուպցիայի վերացման գործում, ինչպիսիք են՝ առողջապահությունը, կրթությունը (ներառյալ կրթության բոլոր մակարդակները) և տնտեսության մյուս ոլորտները, որոնք գործում են շուկայական հարաբերությունների շրջանակներում:

Հոդվածի գիտական նորույթը կայանում է նրանում, որ մեր կողմից իրականացված հարցումները բացահայտում են ՀՀ հանրության շրջանում կոռուպցիայի ամենատարածված դրսևորումները, իսկ ուսումնասիրության արդյունքները կարող են ծառայել որպես այլընտրանք միջազգային կազմակերպությունների կողմից հաշվարկվող կոռուպցիայի ընկալման համաթվերի, որը, բացի կոռուպցիայի դրսևորման հիմնական ոլորտների բացահայտումից, թույլ է տալիս նաև բացահայտել հանրության համար խնդիրների զգայունության աստիճանը:

Բանալի բառեր. կոռուպցիա, կոռուպցիայի ընկալում, կոռուպցիայի դեմ պայքար, կոռուպցիայի ուսումնասիրության մեթոդներ, հարցում, առողջապահություն, կրթական համակարգ:

ОСНОВНЫЕ ПРОБЛЕМЫ И РЕЗУЛЬТАТЫ ОЦЕНКИ ВОСПРИЯТИЯ КОРРУПЦИИ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

Элянора Норайровна Матевосян
Ашот Хачатурович Маркосян
Маро Айказовна Детлофф

Аннотация. Республика Армения, как страна с переходной экономикой, унаследовала высокий уровень административной коррупции, который характеризуется либо отсутствием государственных и общественных институтов наделенных антикоррупционными функциями, либо слабой развитостью таких институтов. Для разработки и реализации антикоррупционной стратегии важно определить цели и направления, нуждающиеся в глубоком реформировании, в том числе - исходя из мнения носителей подобных отношений, представителей общества. Этим обусловлена актуальность исследования.

Целью исследования является изучение теоретико-методологических основ понятия коррупции, подходов к измерению коррупции, а также изучение сфер распространения коррупции в Республике Армения, особенностей восприятия этого явления и степени чувствительности. **Задачей исследования** является выяв-

ление основных направлений антикоррупционной борьбы, основываясь на результатах исследования наиболее коррумпированных направлений в современном обществе РА и чувствительности к коррупции.

В ходе исследования использовались аналитические, опросные, качественные и количественные **методы анализа**. Отбор участников опроса осуществлялся методами целенаправленного выбора и выбором по методу «снежного кома».

Результаты исследования показывают, что классификацию коррупционных проявлений никогда нельзя считать исчерпывающей. В постоянно меняющихся условиях общественной жизни появляются новые виды коррупции.

Результаты опроса, проведенного с целью оценки восприятия и чувствительности коррупционных явлений в РА, свидетельствуют о том, что наиболее распространенными отраслями в РА с точки зрения коррупционных проявлений остаются здравоохранение (по мнению 78% респондентов) и образование (77%). Между тем борьба с коррупцией воспринимается общественностью как монополия властей, а граждане не видят своей роли в искоренении коррупции в таких сферах, как здравоохранение, образование (включая все уровни образования) и других отраслях экономики, которые функционируют в рамках рыночных отношений.

Научная новизна статьи заключается в том, что проведенные нами опросы выявляют наиболее распространенные проявления коррупции среди населения РА, а результаты исследования могут служить альтернативой коэффициентам восприятия коррупции, рассчитываемым международными организациями, которые, помимо выявления основных направлений коррупции, также позволяет выявить степень чувствительности проблем для общества.

Ключевые слова: коррупция, восприятие коррупции, борьба с коррупцией, методы изучения коррупции, опрос, здравоохранение, система образования.

MAIN ISSUES AND RESULTS OF THE ASSESSMENT OF PERCEPTIONS OF CORRUPTION IN THE REPUBLIC OF ARMENIA

Elyanora Norair Matevosyan
Ashot Khachatur Markosyan
Maro Haykaz Detloff

Abstract. Republic of Armenia, as a country with transition economy, inherited a high level of administrative corruption, which is characterized either by the absence of state and public institutions endowed with anti-corruption functions, or by the underdevelopment of such institutions. To develop and implement an anti-corruption strategy, it is important to determine the goals and directions that have the need of deep reforms, including based on the opinion of the bearers of these relations, representatives of society. This is the reason for the relevance of the study.

The aim of the study is to present the theoretical and methodological foundations of the concept of corruption, approaches of its measurement, as well as, study the sectors of RA where corruption is rife, the peculiarities of the perception of this phenomenon and the of sensitivity degree by using surveys' method. **The objective** of the study is to identify the main areas that are in dire need of an anti-corruption measures, by taking into account the results of the surveys amongst modern society aimed at revealing the most corrupt areas and corruption sensitivity in the Republic of Armenia.

In the framework of the study, analytical, qualitative, quantitative and surveys' **methods** were implemented. The selection of survey participants was carried out by the purpose sampling and "snowball" sampling methods.

The results of the study show that the classification of manifestations of corruption can never be exhaustive, as in the constantly changing conditions of public life, new types of corruption come to light.

The results of surveys, conducted to assess the perception and sensitivity of corruption phenomena in the Republic of Armenia, indicate that the most common sectors of corruption manifestations remain healthcare (according to 78% of respondents) and education (77%). Meanwhile, the fight against corruption is perceived by the public as a monopoly of the State and citizens do not see their role in eradicating corruption in such areas as healthcare, education (including all the levels) and other sectors of the economy that operate within the framework of market relations.

The scientific novelty of the article lies in the fact that our surveys reveal the most common manifestations of corruption among the Armenian population, and the results of the study can serve as an alternative to the corruption perception coefficients calculated by international organizations, which, in addition to identifying the main areas of corruption, also allows us to identify the degree of sensitivity of problems for society.

Keywords: corruption, perception of corruption, fight against corruption, methods of studying corruption, surveys, health care, education system.